«ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ»
գիտական պարբերականին տպագրության տրվող հոդվածի կազմման չափորոշիչները

ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունն (ՈՒԳԸ) ամեն տարի նախապատրաստում է ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակվող «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու» գիտական պարբերականը, որտեղ տեղ են գտնում ուսանողների, ասպիրանտների, հայցորդների և երիտասարդ գիտնականների գիտական հոդվածները: Պարբերականն ընդգրկված է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

Պարբերականի բոլոր համարները տեղադրվում են ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայքում՝ www.ssspub.ysu.am:

«ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու»-ում տպագրության կարող են ներկայացվել բուհում կամ գիտահետազոտական կենտրոնում սովորող/աշխատող մինչև 35 տարեկան անձանց հայերեն, ռուսերեն և անգլերեն հոդվածները: Ներկայացված գիտական հոդվածն իր բովանդակությամբ պետք է արտացոլի հեղինակ(ներ)ի կողմից կատարված ինքնուրույն հետազոտության արդյունքները և պարունակի գիտականորեն ընդունված ձևակերպումներ:

Հոդվածի համակարգչային շարվածքը՝ Word 2007-2016: Ծավալը՝ 6 ամբողջական էջից մինչև 15 էջ: Տեքստի տառատեսակը՝ GHEA Grapalat:

Առաջին էջի վերին տողի աջ մասում 12 տառաչափով թավ տրվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը-անուն(ներ)ը: Մեկ տող ներքև՝ տողի աջ մասում, 12 տառաչափով տրվում է բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը/ստորաբաժանումը, կարգավիճակը (բակալավրիատի ուսանող, մագիստրանտ, ասպիրանտ, հայցորդ և այլն): Մեկ տող ներքև 12 տառաչափով գրվում է «Գիտական ղեկավար՝» արտահայտությունը, այնուհետև գրվում են գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անվան առաջինը տառը և ազգանունը: Մեկ տող ներքև 12 տառաչափով գրվում է «Էլ. փոստ՝» արտահայտությունը, այնուհետև ընդգծված տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում, 12 տառաչափով, թավ գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ շարադրվում է հոդվածի հիմնական տեքստը:

Հիմնական տեքստի տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.15, էջի ձևաչափը՝ Ա4, լուսանցքները ձախից՝ 30 մմ, աջից՝ 15 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 20 մմ:

Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմից: Նոր պարբերությունը պետք է սկսվի 1 սմ խորքից:

Գրաֆիկներ/նկարներ/աղյուսակներ տեղադրելիս անհրաժեշտ է կիրառել տեխնիկական այնպիսի միջոցներ, որոնք հոդվածի տպագրական էջադրման ժամանակ կբացառեն հնարավոր աղավաղումները: Գրաֆիկները/նկարները/աղյուսակները պետք է տեղադրվեն էջի մեջտեղում, նկարագրության տեքստի տառաչափը՝ 11:

Հղումները տրվում են հոդվածի բուն տեքստից հետո՝ թավ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» (ռուսերեն և անգլերեն հոդվածների դեպքում՝ համապատասխանաբար «СПИСОК ЛИТЕРАТУРЫ» և «BIBLIOGRAPHY») վերտառությամբ՝ 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.15: Հղումները պետք է հավասարեցվեն երկու կողմից: Հղման մեջ պետք է թավ ներկայացվեն ուսումնասիրված աշխատանքի հեղինակ(ներ)ի ազգանուն-(ներ)ը և անվան (հարկ եղած դեպքում՝ նաև հայրանվան) առաջին տառը, այնուհետև՝ աշխատանքի վերնագիրը, հրատարակման վայրը, թվականը, էջ(եր)ը, որ(ոնց)ից կատարվել է հղումը:

Հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը պարտադիր են. հոդվածի տեքստից հետո մեկ տող բաց թողնելով՝ 12 տառաչափով տրվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը-անուն(ներ)ը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում, 12 տառաչափով, թավ գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը: Հաջորդ տողի կենտրոնում թավ գրվում է «Բանալի բառեր՝» (ռուսերեն և անգլերեն հոդվածների դեպքում՝ համապատասխանաբար «Ключевые слова:» և «Key words:») արտահայտությունը, և տրվում են բանալի բառերը՝ 5-10 առանցքային բառ կամ արտահայտություն, որոնք հնարավորինս ամբողջականորեն արտացոլում են գիտական հոդվածի կամ դրա առանձին մասերի բովանդակությունը: Այնուհետև մեկ տող բաց թողնելով՝ 70-100 բառի սահմաններում համառոտ ներկայացվում է հոդվածի ամփոփումը (նպատակը, խնդիրները, արդյունքը/եզրակացությունը):

Հոդվածի հիմնական տեքստի սկզբում կամ վերջում երախտիքի որևէ խոսք զետեղվել չի կարող:

Վերը նշված չափորոշիչներին չհամապատասխանող հոդվածները չեն տպագրվելու:

REQUIREMENTS FOR ARTICLES PUBLISHED IN SCIENTIFIC JOURNAL 'COLLECTION OF YSU SSS SCIENTIFIC ARTICLES'

Every year YSU Student Scientific Society (SSS) prepares for publishing the 'Collection of YSU SSS Scientific Articles' (published by YSU Publishing House) which includes scientific articles authored by students, PhD students and young scientists under the age of 35. It is worthwhile mentioning that the Collection of Articles is certified by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia. The online versions of the Collection are available on YSU SSS website at http://www.ysu.am/ssspub/en.

The scientific article should reflect the results of an independent research and contain scientificially approved terms.

Articles should be written in Microsoft Word 2007-2016, the text should be typed on a single side of A4 (210 x 297 mm) format page at 1.15 line spacing, using 12-point GHEA Grapalat font, justified. The average article volume should be 6-15 typewritten pages.

Page margins: Left – 30 mm, right – 15 mm, top – 20 mm, bottom– 20 mm.

Author's surname, name: 12 pt, bold, right-aligned.

Name of the institution, faculty, academic degree: 12 pt, normal, right-aligned.

The first letter of the name, the full surname and the academic rank of the supervisor/scientific advisor: 12 pt, normal, right-aligned.

E-mail: 12 pt, underlined, right-aligned.

The title of the article: in capitals, 12 pt, bold, centered.

The indentation of the first line of the paragraph: 1 cm.

While using graphics/pictures/tables it is necessary to use such technical means which will exclude the possibility of distortions while inserting page numbering.

Graphics/pictures/tables: centered; title and description: 11 pt, normal.

BIBLIOGRAPHY: title, place, publisher, date, pages: 12 pt, normal, justified; the first letter of the author's name, the author's full surname: bold.

Armenian, Russian and English summaries are a must:

The surname, name of the author: 12 pt, normal, centered.

The title of the article: in capitals, 12 pt, bold, centered.

Key words: 5-10 words or expressions which reflect the subjetc and the contents of the scientific article or its separate parts. The length of a summary is 70–100 characters. The summary should reflect the purpose, the issues and the results/conclusions of the research.

It is not possible to put any words of gratitude before or after the main text of the article.

Articles which do not meet the above-mentioned requirements will not be published.